ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

13 հոկտեմբերի հինգշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

145
(2625)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 111

2019-ի մայիսի ութին (այդ օրն, ի դեպ, Շուշիի ազատագրման օրն է, ու հայ հասարակությունը դեռ եռատոն նշելու սիրտ ու տրամադրություն ուներ) այդ ժամանակ արդեն մեկ տարվա ստաժով վարչապետ Նիկոլ Փաշինյանը կրկին, նորից, երիցս, հերթական անգամ ու առանց հոգնելու խոսում էր իր թերեւս ամենասիրելի թեմաներից մեկի՝ բանակում զինվորին «շապիկ, ներքնազգեստ» տալու մասին: Փաստերից 13-րդը հետեւյալն էր. «Ժամկետային զինծառայողներն այլեւս ապահովված են բարձրորակ շապիկներով եւ կիսավարտիքներով: Առաջիկայում էական փոփոխության կենթարկվի զինվորականներին տրվող հագուստի, կոշիկի որակը»,- նշում էր նա:

Օրերս, երբ արդեն ոչ թե մի քանի տասնյակ լրատվամիջոցների ու լրագրողների, այլ սոսկ Հանրային հեռուստաընկերության հարցերին էր պատասխանում, պարոն Փաշինյանը երիցս պնդեց՝ բանակը որեւէ բանի կարիք չունի, բայց բոլորս էլ ՀՀ քաղաքացիներ ենք, բանակում մեր եղբայրները, զավակները, ընկերները, հայրերն ու հարազատներն են ծառայություն անցնում, որոնց հորդորով, խնդրանքով ու անգամ պարտադրանքով քլունգ էլ, բայ էլ, գուլպա ու շապիկ էլ մարդիկ ուղարկում են առաջնագիծ, դեռ չասած 2020-ի լայնամասշտաբ պատերազմի մասին, երբ զինվորական հոսպիտալներում անգամ լարանի, բինտի ու պինցետի խնդիր կար: Փաշինյանի մեծամեծ պնդումները, թե բանակը որեւէ բանի պակաս չունի, ոչ այլ ինչ է, քան պարզագույն սուտ:

Ի դեպ, առավել քան զավեշտալի, տարօրինակ ու անտրամաբանական է Փաշինյանի այն հրահանգը ՋՈՒ հակահետախուզությանը, որ պետք է ստուգեն, թե բանակի համար փողոցում բահեր ու շապիկներ հավաքագրողներն իրականում ինչ են անում հավաքագրած ապրանքը: Բանակը, փաստորեն, ամեն խաղ խաղացել էր, հիմա էլ իր՝ առանց այն էլ քիչ աշխատավարձից գումար տնտեսող ու զինվորի համար գուլպա գնող տատիկ-պապիկներով ու դրանք հավաքագրող երիտասարդներով պետք է զբաղվի:

Ինչպես հայտնի է, Եվրամիության դեսպանները համաձայնել են Հայաստան ուղարկել քաղաքացիական առաքելություն, որը պետք է տեղակայվի Ադրբեջանի հետ սահմանի երկայնքով՝ վստահությունն ամրապնդելու եւ դելիմիտացիային նպաստելու համար. այս մասին հայտնել է «Ազատություն» ռադիոկայանը: Նկատենք՝ Եվրամիությունը քաղաքացիական առաքելություն ունի այս պահին 11 երկրներում, այդ թվում՝ հարեւան Վրաստանում, 2008 թվականի ռուս-վրացական պատերազմից հետո: Սովորաբար պրակտիկա կա՝ առաքելության ժամանումը երկար չի տեւում՝ մոտ երկու շաբաթ: Ընդգծենք՝ քաղաքացիական առաքելության անդամները չեն կարող իրենք հատել սահմանը եւ պետք է տեղակայված մնան, դիտարկումներ անցկացնեն միայն այդ վայրում: Դիցուք, մեր պարագայում առաքելության անդամները չեն կարող անցնել Ադրբեջան, քանի որ կարող են ենթարկվել ագրեսիայի կամ գերեվարվել, ինչպես ՀՀ քաղաքացիները: Նրանք զինված չեն, հետեւաբար չեն կարող այդ առումով ազդեցություն ունենալ, եւ նրանց առաքելությունը միայն միջնորդական է: Օրինակ՝ եթե ինչ-որ խնդիր առաջանա, ապա նրանք կարող են զանգել ադրբեջանական կողմին եւ փորձել ընդհանուր հայտարարի հասնել, կարող են հենց սահմանին պարբերաբար հանդիպումներ կազմակերպել երկու կողմերի միջեւ: Այն հանգամանքը, որ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւն ասել է, թե ինքը կաշխատի առաքելության հետ այնքանով, որքանով կառնչվի Ադրբեջանին, չի խանգարելու աշխատանքին, քանի որ, այսպես, թե այնպես, նրանք տեղակայվելու են հենց ՀՀ սահմանին: Առավոտից մինչեւ երեկո նրանք պետք է մշտադիտարկումներ անցկացնեն, եթե խախտումներ լինեն, արձանագրեն դրանք, ոչ ավելին: Շատ կարեւոր հարց է, թե որտեղ պետք է կանգնեն այդ դիտորդները: Հայաստանը պետք է պահանջի, որ նրանք տեղակայվեն այն տարածքներում, որը եղել է մինչեւ 2021 թվականի մայիսի 12-ը, երբ ադրբեջանական զորքերը մտան ինքնիշխան ՀՀ:

«Ժողովուրդ» օրաթերթը իր լավատեղյակ աղբյուրներից տեղեկացավ, որ ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում վերսկսվել է Նիկոլ Փաշինյանի, Արթուր Վանեցյանի եւ Սասուն Խաչատրյանի հեռախոսային խոսակցություններն ապօրինի ձայնագրելու եւ համացանցում տարածելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործով քննությունը: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ նախկինում քննիչները չբացահայտված քրեական գործերը կասեցնում էին. հիմա ամեն ինչ այլ է: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը հստակ սահմանում է, որ կամ քրեական վարույթը կարճվում է, կամ որեւէ մեկի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվում եւ մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվում: Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը այլեւս չբացահայտված քրեական վարույթների կասեցման իրավական ընթացակարգ չի նախատեսում: Եթե նախկինում քննիչները քրեական գործերը կասեցնում էին ու գցում տարիներով իրենց «սեյֆերում», ապա հիմա պետք է քննությունը շարունակեն: Հիշեցնենք, որ 2018-ի սեպտեմբերի 11-ին համացանցում էր հայտնվել ԱԱԾ նախկին տնօրեն Արթուր Վանեցյանի եւ Սասուն Խաչատրյանի հեռախոսազրույցի գաղտնալսման գործը, որը հետագայում կարճվեց՝ հանցակազմի բացակայության հիմքով, իսկ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Արթուր Վանեցյանի եւ Սասուն Խաչատրյանի հեռախոսային խոսակցություններն ապօրինի ձայնագրելու եւ համացանցում տարածելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործը կասեցված էր: Այժմ կվերսկսվի այս մասով քննությունը: Թե ինչ ավարտ կունենա, թերեւս դժվար չէ կանխատեսել:

Հայաստանի առեւտրի խոշոր կենտրոնները խոշորացույցի տակ են: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմինը ստուգումների շարք է սկսել երեւանյան տոնավաճառներում: Մեզ հայտնի դարձավ, որ օգոստոսի 14-ին տեղի ունեցած ուժգին պայթյունից հետո «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեսչական մարմինը նորից ստուգումներ է իրականացրել: Այժմ ստուգման արդյունքներն ամփոփման փուլում են, առաջիկա օրերին հայտնի կլինի՝ «Սուրմալու»-ն փակվելու է, թե շարունակելու է աշխատել: Չի բացառվում, որ դադարեցվի առեւտրի կենտրոնի գործունեությունը: Բացի այս, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ստուգումներ իրականացվել են նաեւ Մալաթիայի տոնավաճառում: Տեսչական մարմնից փոխանցեցին, որ բոլոր այն օբյեկտները, որոնք 2021 թվականին ստուգվել են, կարգադրագրի ժամկետները լրացել են, տեսչական մարմինը նորից ստուգում է իրականացնում: Շուտով կստուգվեն նաեւ մյուս առեւտրի կետերը, այդ թվում՝ «Գնունի» շուկան: Նշենք, որ ավարտվել են «Փեթակ» առեւտրի կենտրոնում իրականացված ստուգումները, ինչի արդյունքում գործունեության դադարեցման որոշում է կայացվել:

ՊԵՏՔ Է ՍՏՈՐԱԳՐՎԻ

ՈՐՈՇԱԿԻ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեկ՝ հոկտեմբերի 12-ին, կառավարությունում հանդիպել է արտախորհրդարանական ուժերի հետ: ArmLur.am-ի հետ զրույցում Հայաստանի Եվրոպական կուսակցության նախագահ Տիգրան Խզմալյանն ասաց, որ Փաշինյանի հետ հիմնականում Հայաստանի արտաքին քաղաքականության ու արտաքին վեկտորի հետ կապված հարցեր են քննարկել: Նրա փոխանցմամբ՝ թեեւ որոշակի անհամաձայնություններ ունեն Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագիր կնքելու մասով, բայց հասկանում են՝ այս պարագայում ու այս իրավիճակում միջանկյալ ինչ-որ փաստաթուղթ պետք է ստորագրվի:

-Պարոն Խզմալյան, Դուք հանդիպում եք ունեցել վարչապետ Փաշինյանի հետ: Որպես արտախորհրդարանական ուժի ներկայացուցիչ՝ ինձ հետաքրքրում է՝ ինչ հարցերի շուրջ եք զրուցել նրա հետ:

-Մենք զրուցել ենք մեր վերջին հանդիպումների մասին: Քննարկել ենք նրա արտաքին քաղաքական քայլերը Նյու Յորքում, Փարիզում, Պրահայում, եւ ընդհանուր խոսակցությունը վերաբերում էր այդ հարցերին: Քննարկեցինք, մեր կարծիքները հայտնեցինք եւ համեմատեցինք մեր մոտեցումները: Հայաստանի եվրոպական կուսակցությունը Արցախի եւ Հայաստանի համար իր աջակցությունն է հայտնում Արեւմուտքի հետ մերձեցմանը եւ եվրոինտեգրմանը միտված կառավարության քայլերին:

-Իսկ Դուք տեսնո՞ւմ եք, որ կառավարությունը իսկապես գնում է մերձեցման քայլերի Արեւմուտքի հետ, թե պարզապես արտաքին շղարշ է:

-Մենք դա տեսնում ենք եւ համոզված ենք դրանում: Դա ոչ միայն մեր կառավարության բարի կամքն է մեզ թելադրում, այլ այն, որ քաղաքական վերլուծությունը ցույց է տալիս, որ Արեւմուտքի շահագրգռվածությունը դրանում մեծ է, եւ այդ շահագրգռվածությունը տեսնելով՝ մեզ ավելի մեծ վստահություն է ներշնչում:

-Հետեւաբար ի՞նչ եք կարծում, այս կառավարությունը ավելի ընդգրկված կլինի՞ եվրոպական հարցերում ձեր տեսակետը նկատի առնելու:

-Ես վստահ եմ եւ ասել եմ՝ մենք աջակցում ենք այս քաղաքականությանը ոչ այն պատճառով, որ մենք ենք ընդունել այս կառավարության դիրքորոշումը, այլ կառավարությունն է ընդունել այն դիրքորոշումը, որ տարիներ շարունակ արտահայտում էր Եվրոպական կուսակցությունը:

-Այս օրերին հաճախ է խոսվում Ադրբեջանի հետ, այսպես ասված, խաղաղության պայմանագրի ստորագրման մասին: Թե՛ Հայաստանի կողմից, թե՛ Ադրբեջանի կողմից մամուլի եւ հասարակության հիմնական խոսակցությունը դա է: Այս հարցերի շուրջ ի՞նչ խոսակցություններ եք ունեցել Փաշինյանի հետ:

-Մենք ունենք անհամաձայնության եզրեր այդ հարցում, բայց սկզբունքորեն մենք համարում ենք, որ որեւէ միջանկյալ լուծում պետք է: Մենք հասկանում ենք, որ աշխարհաքաղաքական զարգացումները շլացուցիչ են, եւ տեսնում եք՝ ինչ է կատարվում ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում: Մենք հասկանում ենք, որ դա բերելու է անխուսափելի քաղաքակրթական փոփոխությունների: Նման պայմանագիրը, որը կանվանենք խաղաղության պայմանագիր կամ այլ կերպ, այս պահին կհամարվի ընդունելի: Եթե Հայաստանը հետեւողականորեն լինի ժողովրդավարական զարգացման ուղղությամբ, ապա գնալով ժողովրդավարական պետության եւ բռնապետական Ադրբեջանի քաղաքական դիրքերը եւ քաշը միջազգային ասպարեզում գնալով ավելի են տարբերվելու՝ ի օգուտ Հայաստանի: Մենք տեսնում ենք այս խաղաղության պայմանագրի մասին խոսակցությունները՝ որպես անհրաժեշտ դիվանագիտական փուլ:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

«ՍՈՒՊԵՐՔԱՂԱՔԱՊԵՏ»

ԱՌԱՆՑ ԻՆՏՐԻԳՆԵՐԻ ԵՎ ՍՈՒՐ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթը գրում է. «Վստահաբար կարելի է ասել, որ Երեւանի նախկին քաղաքապետ, կատակերգակ դերասան Հայկ Մարությանի մոնոներկայացումը բավականին շեղվել է նախնական սցենարից: Ներկայացման նախնական անոնսից, որ բավականին անհանգստացրել էր քաղաքական դաշտի որոշ ներկայացուցիչների, բայց փոխարենը մեծ ինտրիգ առաջացրել հասարակության մոտ, բուն ներկայացման մեջ միայն Մարությանի ձեռքի արկղն էր մնացել, ինչն էլ գրկած բեմ է մտնում, ակնդետ նայում իր իսկ՝ քաղաքապետի երդմնակալության օրն արված լուսանկարին ու բացականչում՝ անասո՛ւն էլի:

«Սուպերքաղաքապետի» մոնոներկայացման մեջ սուր անկյուններ, կոնկրետ, թիրախային ու հետաքրքիր քննադատություն չկար: Մարությանը, ասես շառիցփորձանքից հեռու տարբերակն ընտրելով, զգուշացել էր՝ իշխանական որեւէ տեսակի մահակ չիջնի գլխին: «Ժողովուրդ» օրաթերթը դեռ ամիսներ առաջ էր գրել, որ նա իր ներկայացման մեջ մտադիր է վարչապետ Նիկոլ Փաշինյանի ու իշխանական կաբինետի այլ անդամների՝ իրեն ուղարկված ձայնային հաղորդագրություններն օգտագործել, բայց նախկին քաղաքապետը, ըստ երեւույթին, վախեցել կամ կաշկանդվել է նման քայլի գնալ ու բավարարվել է՝ սոսկ ներկայացման մեջ կեղծ voicer տեղադրելով: Բեմադրության մեջ թե՛ Նիկոլ Փաշինյանի, թե՛ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի, թե՛ կառավարական կաբինետի ներկայացուցիչների, թե՛ ԱԺ պատգամավորներից որեւէ մեկի ու թե՛ անգամ Էդմոն Մարուքյանի մասին թթու խոսք, սուր քննադատություն կամ սարկազմ չկար: Հանդիսատեսն անատամ այս ներկայացման մեջ ոչ միայն ինտրիգ, այլ տողատակեր կամ ենթատեքստեր չի կարող տեսել կամ գտնել. դրանք պարզապես բացակայում են:

Եթե կարճ բնութագրելու լինենք Մարությանի մոնոներկայացումը, ապա, միանշանակ, ինտրիգների սպասումով տոմս գնող հանդիսատեսի հույսերը չեն արդարանալու. այնտեղ, բացի «թեթեւի մեջ» խայթոցներից թե՛ նախկիններին, թե՛ նորերին, ուրիշ ոչինչ չկա: Սա ավելի շատ ինքնամաքրման ակտի նմանվող բեմադրություն է, որտեղ Մարությանը, ինչքան հնարավոր է, փորձում էր իր իսկ սահմանած սպիտակ քողի ներքո հանդես գալ»:

ԿՀԱՏԿԱՑՆԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի գլխավոր դատախազությանը 40 մլն դրամ գումար կհատկացվի: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ այդ գումարը տրվելու է ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից իրականացվող փորձաքննությունների ծառայությունների համար:

Պարզվում է՝ 2022 թվականի պետական բյուջեով փորձաքննությունների ծառայությունների համար նախատեսված ավելի քան 14,5 մլն դրամ գումարն ամբողջությամբ սպառվել է: Այս պահին ընդհանուր հաշվարկով ենթակա է վճարման 20 մլն 610 հազար դրամ գումար: Ավելին՝ առաջիկա 4 ամիսների ընթացքում անհրաժեշտ կլինի նվազագույնը եւս 20 մլն դրամի չափով գումար իրականացվող փորձաքննությունների ծառայությունների դիմաց վճարում կատարելու համար:

ԻՆՉԻ՞Ց ԵՆ ՎԱԽԵՑԱԾ

Երկու օր առաջ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կառավարությունում հերթական հանդիպումն է ունեցել արտախորհրդարանական ուժերի ներկայացուցիչների հետ: Կառավարության տարածած հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ հանդիպմանը մասնակցել են «Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը, Հայաստանի քրիստոնեաժողովրդավարական կուսակցության նախագահ Լեւոն Շիրինյանը, «Միասնական հայրենիք» կուսակցության նախագահ Միհր Տերտերյանը, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության Հայաստանի վարչության ատենապետ Սեդրակ Աճեմյանը, Հայաստանի եվրոպական կուսակցության նախագահ Տիգրան Խզմալյանը, «Ինքնիշխան Հայաստան» կուսակցության ղեկավար Դավիթ Սանասարյանը, «Ուժը հայրենյաց» կուսակցության նախագահ Տիգրան Արզաքանցյանը: «Ժողովուրդ» օրաթերթը երեկ ամբողջ օրը փորձեց կապ հաստատել վերոնշյալ անձանց հետ ու պարզել՝ ինչ են քննարկել վարչապետի հետ: Մեզ միայն Խզմալյանի հետ խոսել հաջողվեց, մյուսները, ըստ երեւույթին, ինչ-որ բանից վախենալով կամ կաշկանդվելով, խուսափեցին խոսել կամ կապի դուրս գալ: Շիրինյանը, օրինակ, լսելով, որ լրագրող է զանգահարողը, բավական անքաղաքավարի կերպով ցած դրեց հեռախոսը: ՍԴՀԿ-ից խոստացան՝ Աճեմյանն անպայման կկապվի ու կզրուցի մեզ հետ, Սամվել Բաբայանի կուսակցության ներկայացուցիչ Տերտերյանը կարդաց մեր՝ իրեն ուղղված հաղորդագրությունները, բայց ո՛չ Աճեմյանը, ո՛չ Տերտերյանը կապի դուրս չեկան մեզ հետ: Տիգրան Արզաքանցյանի, Արամ Սարգսյանի ու Դավիթ Սանասարյանի հետ նույնպես կապ հաստատել չստացվեց: Ինչ է ստացվում. Փաշինյանի հետ, ըստ երեւույթին, մեծ սիրով հանդիպման գնացող քաղուժերը, որ հիմնականում պրոարեւմտյան կողմնորոշում ունեն, վախենում են շփվել լրագրողների հետ կամ էլ կաշկանդվում ու ամաչում են հանգամանքից, որ Փաշինյանի հետ են հանդիպում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը գրում է, որ երեկ խորհրդարանում հանդիպել է Հայաստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակության ղեկավար Թիերի Ռիբոնի հետ: Քննարկել են մեր գերիներին, անհետ կորածներին, Հայաստանի սահմանամերձ համայնքների բնակիչներին առնչվող կենսական հարցեր: Իր գործընկերներ պարոն Ռիբոնի եւ Հաղորդակցման եւ կանխարգելման ծրագրերի ղեկավար Ջառա Ամատունու հետ անցկացրել են բավականին կարեւոր հանդիպում եւ արդյունավետ քննարկում:

ԵՎՐՈՊԱՆ ԿՄՐՄԻ

Եվրոպական լրատվամիջոցները կանխատեսում ու զգուշացնում են՝ մոտալուտ ցրտի հետ կարող է սաստկանալ նաեւ Արեւմուտքի երկրներում տիրող իրավիճակը: Բանն այն է, որ, պայմանավորված ռուս-ուկրաինական պատերազմով, ինչպես նաեւ «Հյուսիսային հոսք» գազատարի տուրբինների անսարքության հետեւանքով Ռուսաստանից Եվրոպա մատակարարվող գազի ծավալն էականորն կրճատվել է: Դա լրջագույն խնդիրներ է ստեղծել եվրոպացիների համար: Լրատվամիջոցները գրում են, որ Արեւմուտքի ժողովուրդները ստիպված են խանայողաբար օգտագործել վառելիքից ստացվող էներգիան՝տան ջեռուցումից ընդհուպ լոգանք ընդունելը: Մամուլը գրում է, որ առանձնատներում մարդիկ, այո, կարող են բուխարի վառել ու տաքանալ, եթե, իհարկե, կարողանան վառելափայտ ձեռք բերել: Ինչ վերաբերում է բնակարաններին, ապա կանխատեսվում է, որ այստեղ պետությունը ջերմաստիճանի հստակ սանդղակ կսահմանի (ըստ երեւույթին, 15 աստիճան), ու մարդիկ ստիպված կլինեն ձմեռն անցկացնել այդ պայմաններում:

ՓՈԽԱՆՑՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ադրբեջանը «Հայաստանին է փոխանցել խաղաղության համաձայնագրի ընդլայնված տարրերը», հայկական կողմը ժամանակ է վերցրել դրանց ծանոթանալու համար: Այս մասին հայտարարել է Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովը՝ Բիշքեկում հարցազրույց տալով ադրբեջանական հեռուստաընկերություններին: Նա Բիշքեկում Ադրբեջանի նախագահի գլխավորած պատվիրակության կազմում է: AzTv-ի հողորդման համաձայն՝ Բայրամովն ասել է, որ ընդլայնված տարրերը լրացնում են նախկինում ներկայացված 5 հիմնական սկզբունքները, որոնք պետք է խաղաղության համաձայնագրի եւ Բաքվի ու Երեւանի միջեւ հարաբերությունները նորմալացնելու հիմքը հանդիսանան: Նա նշել է, որ «Ադրբեջանը շահագրգռված է Հայաստանի հետ բանակցությունների առաջընթացով», մասնավորապես խաղաղության համաձայնագիրը ստորագրելու, հաղորդակցության ուղիները բացելու եւ հայ-ադրբեջանական սահմանը սահմանազատելու համար: «Այս հարցերը հանդիպումների ընթացքում մշտապես բարձրացվում են, եւ Ադրբեջանը ներկայացնում է իր դիրքորոշումը»,- ասել է նա: Բայրամովը հայտնել է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման հանձնաժողովի երրորդ նիստը պլանավորվում է անցկացնել հոկտեմբերին Բրյուսելում:

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑ

7 ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

1990-ականների վերջից մինչեւ 2020-ի պատերազմը բանակցային սեղանին դրված են եղել Արցախյան հարցի կարգավորման 7 հիմնական տարբերակներ, որոնք այս ընթացքում տարբեր անվանումներ են ստացել: ArmLur.am-ը պարբերաբար կներկայացնի մինչեւ այս եղած սկզբունքներն ու հարցի կարգավորման տարբերակները, դրանց ձախողման պատճառները:

Փաթեթային եւ փուլային տարբերակները մերժելուց հետո ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները 1998-ի նոյեմբերին կողմերին առաջարկեցին նոր տարբերակ: Նոր՝ «Ընդհանուր պետության» տարբերակում Ղարաբաղի կարգավիճակի մասին ասվում էր.՝ «Լեռնային Ղարաբաղը հանրապետության ձեւի պետական եւ տարածքային կազմավորում է եւ Ադրբեջանի հետ միասին կազմավորում է «Ընդհանուր պետություն»՝ նրա միջազգայնորեն ճանաչված սահմաններում»: Այս տարբերակով եւս հայկական ուժերը պետք է դուրս բերվեին Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքներից՝բացառությամբ Լաչինի: Փաստաթղթում առանձին կետերով նշվում էր, որ ադրբեջանցի փախստականները պետք է վերադառնան Շուշի, հայերը՝Շահումյան:

Սակայն Ադրբեջանը «Ընդհանուր պետության» գաղափարը մերժում է: Հայաստանն ու Ղարաբաղը լուրջ վերապահումներով ընդունում են միջնորդների առաջարկած «Ընդհանուր պետության» տարբերակը՝ որպես բանակցությունների հիմք: Շատ է քննարկվում նաեւ Քի-ուեսթյան տարբերակը, որը դեռ գաղտնազերծված չէ: Ըստ առկա տեղեկատվության՝ այս տարբերակով Ղարաբաղը Լաչինի միջանցքով պետք է միացվեր Հայաստանին, իսկ Ադրբեջանը՝ Մեղրիի միջանցքով Նախիջեւանին:

Քի-ուեսթյան բանակցություններից սկսած՝ Ղարաբաղը որպես կողմ դուրս է մնում բանակցային գործընթացից, իսկ բանակցությունների ժամանակ Հայաստանի նախագահի պաշտոնը զբաղեցնում էր Ռոբերտ Քոչարյանը:

Հետագայում՝ արդեն բանակցությունների ընթացքում, միջնորդները Հայաստանին ու Բաքվին ներկայացնում են Մադրիդյան սկզբունքները:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ

Միացյալ Նահանգներն առաջիկայում շարունակելու է ակտիվորեն ներգրավված մնալ Հայաստանի եւ Ադրբեջանի հետ հարաբերություններում, այդ թվում՝ ամենաբարձր մակարդակներով:

Նա հիշեցրել է Նյու Յորքում ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի եռակողմ հանդիպումը Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների հետ՝ընդգծելով, որ սա վերջին ռազմական գործողություններից հետո առաջին հանդիպումն էր նման ձեւաչափով, ինչպես նաեւ պետքարտուղարի վերջին հեռախոսազանգերը ԱԳ նախարարներին: Բացի այդ, Փրայսը նշել է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի ԱՄՆ համանախագահ, Կովկասյան բանակցությունների հարցերով ավագ խորհրդական Ֆիլիպ Ռիքերն ամենօրյա շփումների մեջ է թե՛ հայկական, թե՛ ադրբեջանական կողմի հետ:

«Ուստի մենք շարունակելու ենք այս հարցում ներգրավված մնալ: Չեմ կարող խոստանալ հստակ արդյունք, սակայն կարող եմ խոստանալ, որ սա մեզ համար առաջնահերթություն է մնալու»,- ասել է ԱՄՆ պետդեպի խոսնակը:

ՆՈՐ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Երեկ Ալավերդի համայնքի ավագանու անդրանիկ նիստն էր: ArmLur.am-ը տեղեկացավ, որ այստեղ, ըստ նախնական պայմանավորվածության, համայնքապետ ընտրվեց «Ապրելու երկիր» կուսակցության թեկնածու Արկադի Թամազյանը:

Հիշեցնենք՝ սեպտեմբերի 25-ին Ալավերդիում անցկացված ՏԻՄ ընտրություններում քաղաքական 4 ուժերից ոչ մեկին չէր հաջողվել 50 տոկոսից ավելի ձայն ստանալ: «Ապրելու երկիր» եւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունները ստացել են 13-ական մանդատ, իսկ «Հայ ազգային կոնգրեսը» թեեւ չէր հաղթահարել անցողիկ շեմը, բայց օրենքի ուժով 1 մանդատ ստացավ, որովհետեւ, համաձայն օրենքի, համայնքի կառավարումը պետք է կազմված լինի երեք ուժից:

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԿԱՅԱՑԵԼ Է

Երեւանում տեղի է ունեցել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Արայիկ Հարությունյանի հանդիպումը: Այս մասին հայտնեցին ՀՀ վարչապետի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից:Վարչապետի աշխատակազմից նաեւ հայտնեցին, որ նման հանդիպումները կրում են պարբերական բնույթ: Հոկտեմբերի 9-ին հայտնի էր դարձել, որ Արցախի նախագահի գլխավորած պատվիրակությունը ժամանելու է Երեւան՝ ՀՀ իշխանությունների հետ քննարկելու Արցախի եւ Հայաստանի շուրջ ստեղծված իրավիճակը:

ԿՀԱՆԴԻՊԵՆ

Ռուսական կողմի նախաձեռնությամբ՝ հոկտեմբերի 14-ին Աստանայում նախատեսված է անցկացնել Հայաստանի, Ռուսաստանի ու Ադրբեջանի ԱԳ նախարարների հանդիպումը: Այս մասին հայտնեցին ՀՀ արտաքին գործերի նախարարությունից:

ԲԵՌՆԱՏԱՐԸ ՓՈԽՎԵԼ Է

ԲԱՑԱՌԻԿ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ՊԱՅԹՅՈՒՆԻՑ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ Ղրիմի կամրջի պայթյունի դեպքով Ազգային անվտանգության ծառայությունում կհարուցվի քրեական գործ: Ինչպես հայտնի է, ՀՀ գլխավոր դատախազությունը այս մասով գրություն էր ուղարկել ԱԱԾ:

Ռուսաստանի քննչական ծառայության ղեկավարը հայտնել էր. «Արդեն պարզել ենք պայթած բեռնատարի երթուղին՝ Բուլղարիա, Վրաստան, Հայաստան, Հյուսիսային Օսիա, Կրասնոդար»: Բեռնատարի վարորդը եղել է Հայաստանի եւ Վրաստանի քաղաքացի Արթուր Թերջանյանը:

ArmLur.am-ին բացառիկ մանրամասներ են հայտնի դարձել այս գործից: Մասնավորապես, մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Ղրիմի կամուրջը պայթեցրած բեռնատար մեքենան Հայաստանից դուրս է եկել հոկտեմբերի 1-ին: Արդեն ՊԵԿ-ն էլ հայտնեց, որ մեքենան մանրազնին ստուգվել է, եւ որեւէ պայթուցիկ նյութ կամ կասկածելի առարկա չի հայտնաբերվել:

ՀՀ ուժային կառույցները, ArmLur.am-ին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն, պարզել են, որ Հայաստանով անցած բեռնատար մեքենան գնացել է Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասի Արմավիր քաղաք եւ այնտեղ փոխվել է, պայթուցիկ նյութերով բեռնվել եւ հասնելով Ղրիմի կարեւորագույն կամուրջին՝ պայթել է:

Իսկ ո՞վ է Հայաստանի քաղաքացի Արթուր Թերջանյանը: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ նա Հայաստանի եւ Վրաստանի քաղաքացի է եւ բնակվում է Վրաստանի Ախլցխա քաղաքում: Նշենք, որ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում ուսումնասիրվել են ՌԴ անվտանգության դաշնային ծառայության կողմից այսօր տարածված տեղեկությունները եւ զանգվածային տարբեր լրատվամիջոցներում առկա հրապարակումները: Հայտնել էինք, որ Ղրիմի կամրջի վրա ահաբեկչության գործով ձերբակալվել են 8 մարդ՝ ՌԴ հինգ քաղաքացի, Ուկրաինայի 2 եւ Հայաստանի 1 քաղաքացի: Նկատի ունենալով, որ հրապարակումը պարունակել է առերեւույթ հանցանքի մասին վկայող տեղեկություններ՝ Գլխավոր դատախազությունը դրանք հասցեագրել է ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտ՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու հանձնարարությամբ:

Եւ, ահա, ArmLur.am-ի տեղեկություններով՝ այս դեպքում ՀՀ ԱԱԾ-ում քրեական գործ կհարուցվի՝ պարզելու մանրամասները:

Հավելենք, որ ArmLur.am-ը իրավիճակին ծանոթանալու համար հեռախոսազրույց է ունեցել Ղրիմի հայկական համայնքի ղեկավար Գեորգի Հակոբյանի հետ:

«Ղրիմում իրավիճակը հանգիստ է, տեղի հայերը ավելի շատ մտահոգված են Հայաստանով»,- ArmLur.am-ին փոխանցեց Ղրիմի հայկական համայնքի ղեկավար Գեորգի Հակոբյանը: Հիշեցնենք՝ հոկտեմբերի 8-ին Ղրիմի կամուրջի հատվածներից մեկում վառելիքով լի ցիստեռն էր պայթել: Կամրջի երկու ավտոմոբիլային հատվածները մասամբ փլուզվել են: Այժմ երթեւեկությունը վերականգնվել է:

«Պայթյունի առաջին օրը ժողովուրդը մի քիչ խառն էր, բայց հիմա ամեն ինչ նորմալ է, հանգիստ, խնդիր չկա այստեղ: Մի քանի ժամ փակեցին, ստուգեցին, ու վերանորոգվում է ուժեղ տեմպերով: Ավտոմեքենաները գնում, գալիս են, երկաթուղին գործում է, ուտելիքը կա… Ամեն ինչ կարգին է, մի՛ անհանգստացեք: Ճիշտ է, իրադրությունը լարված է, բայց խուճապ չկա: Այստեղի հայերն ավելի շատ հայաստանով են մտահոգված»,- ArmLur.am-ին ասաց Գեորգի Հակոբյանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեզ հայտնի դարձավ, որ 2022 թվականի հունիսի 21-ին Արմեն Շահբազյանը կնոջ՝ Գայանե Թովմասյանի, Երեւանում բնակվող ավագ որդու՝ Արման Շահբազյանի, միջնեկ որդու՝ Աղաբեկ Շահբազյանի, կրտսեր որդու՝ Կարեն Շահբազյանի, հարեւան Լուսինե Հովսեփյանի եւ իր երկու գործընկերների հետ միասին իրենց պատկանող՝ Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի 29-րդ փողոցի 82/2-րդ հասցեում նշել են ծննդյան տարեդարձ: Ժամը 23:00-ի սահմաններում Կարեն Շահբազյանը, Արմեն Շահբազյանը եւ վերջինիս գործընկերներ Արսեն Բաղդասարյանն ու Արսեն Բարիսաքոյանը, գտնվելով ոգելից խմիչքի ազդեցության տակ, խոսակցություն են ունեցել 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից ՀՀ-ի եւ Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված 44-օրյա ագրեսիվ պատերազմի ժամանակ մարտի դաշտը թողած զինծառայողների վերաբերյալ: Կարեն Շահբազյանը, հանդիսանալով 44-օրյա պատերազմի մասնակից, վիրավորվել է արված արտահայտություններից եւ իր մոտ գտնվող դանակի սայրը պահել է Արսենի Բաղդասարյանի պարանոցին: Վիճաբանությանը միջամտել է Արման Շահբազյանը եւ փորձել է Կարեն Շահբազյանի ձեռքից վերցնել դանակը, որի ժամանակ վնասել է Արման Շահբազյանի ձախ ձեռքը:

Հյուրերին ճանապարհելուց հետո Արմեն Շահբազյանը որդու՝ Արման Շահբազյանի ձեռքը դանակով վնասելու հարցի շուրջ տան ննջասենյակում վիճաբանության է բռնվել կրտսեր որդու՝ Կարեն Շահբազյանի հետ, որի ժամանակ վերջինս, իր մոտ եղած դանակը ձեռքում պահած, անկանոն շարժումներ է կատարել: Արմեն Շահբազյանը որդու ձեռքից վերցրել է դանակը, փակել է շեղբը եւ դանակի բռնակով, այնուհետեւ նաեւ բռունցքներով հարվածներ է հասցրել Կարեն Շահբազյանի գլխի եւ մարմնի տարբեր մասերին: Վիճաբանության ձայներից քնից արթնացել է Գայանե Արկադիկի Թովմասյանը եւ քաշելով ամուսնու ձեռքից՝ փորձել է որդուն պաշտպանել, որի ընթացքում որդին հեռացել է տանից, իսկ Արմեն Շահբազյանն ապօրինաբար Գայանե Թովմասյանին կյանքից զրկելու դիտավորությամբ բռունցքներով եւ ոտքերով, ինչպես նաեւ արմունկով բազմաթիվ ուժգին հարվածներ է հասցրել նրա կենսական կարեւոր օրգաններին, ապօրինաբար, դիտավորությամբ նրան զրկել կյանքից:

ՎՃԻՌ Է ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ

ArmLur.am-ի հայտնի դարձավ, որ Անրի Սեդոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2020 թվականի նոյեմբերի 10-ին Երեւան քաղաքում բազմաթիվ անձանց հետ միասին մասնակցել է ջարդելով, գույք ոչնչացնելով եւ վնասելով զուգորդված զանգվածային անկարգություններին, ինչպես նաեւ նախնական համաձայնության գալով Կարեն Մարությանի հետ, ապօրինի մուտք գործելով ՀՀ կառավարության շենքի թիվ 218, 219 եւ 402 աշխատասենյակներ՝ կատարել է խոշոր չափերով ուրիշի գույքի բացահայտ հափշտակություն:

ArmLur.am-ի հետ զրույցում Անրի Սեդոյանի փաստաբան Արսեն Մկրտչյանը հայտնեց, որ Անրի Սեդոյանն ասատազրկման է դատապարտվել երեք տարի ժամկետով, իսկ Կարեն Մարությանը՝ 6,5 տարի:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՓՈՐՁԵԼ Է ԿԱԽՎԵԼ

ArmLur.am-ին քիչ առաջ հայտնի դարձավ, որ ուշագրավ դեպք է եղել «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ դատապարտյալ Սամվել Շահգելդյանը պատուհանի ճաղավանդակից փորձել է կախվել, սակայն բանտում աղմուկ-աղաղակ է եղել, խուց են շտապել Քրեակատարողական հիմնարկի ծառայողները եւ կարողացել են կանխել դատապարտյալի գործողությունները:

ԳՈՐԾԵՐԸ ՏԵՂԱՓՈԽՎԵՑԻՆ

Մեզ հայտնի դարձավ, որ ԱԺ «Հայաստան» խմբակցության ղեկավար, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանի՝ ապօրինի գույքի բռնագանձման գործը, Երեւանի նախկին քաղաքապետ Գագիկ Բեգլարյանի, ԱԺ նախկին պատգամավոր Մանվել Գրիգորյանի դեմ Գլխավոր դատախազության՝ ապօրինի գույքի բռնագանձման գործերը Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանից տեղափոխվեցին Հակակոռուպցիոն դատարան:

Ի դեպ, գրել էինք, որ Գլխավոր դատախազությունն ու ԲԴԽ-ն ներքին գզվռտոցի մեջ են: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ վերջին շրջանում Գլխավոր դատախազությունը մեկը մյուսի հետեւից դատարան է ուղարկում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասով նախկին պաշտոնատար անձանց գործերը: Դատարանը դատախազության պահանջը վարույթ է ընդունում, որոշում, թե նախկին պաշտոնյաների գույքի վերաբերյալ գործերը Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի քաղաքացիական գործեր քննող որ դատավորները պետք է քննեն: Գործը հասել է դատարան, սակայն դատարանում նիստերը չեն կայանում:

Ինչո՞ւ չեն կայանում նիստերը. պարզաբանման համար «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց Բարձրագույն դատական խորհուրդ, որտեղից մեզ պատասխանեցին. «Գործերը քնեցնելու որեւէ միտում չկա: Հակակոռուպցիոն դատարանը նոր է ձեւավորվել, եւ, հետեւաբար, գործերը վարույթ ընդունելուց հետո սահմանված ժամկետներում կնշանակվեն նաեւ դատական նիստերի օրերը»: Պարզվում է, որ բոլոր գործերը չէ, որ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարաններն են քննելու: Մի մասը տեղափոխվելու են Հակակոռուպցիոն դատարան, որտեղ նոր նշանակված դատավորները դեռ կնիք ստանալու ու աշխատասենյակ ունենալու հարց են լուծում: Ի՞նչ է ստացվում. դեռեւս 2018-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից քանիցս շրջանառված թեզը, թե «թալանը կոպեկ առ կոպեկ» հետ են բերելու», դեռեւս համալիր գործընթացի չի վերածվում, ավելին՝ ձգձգվում ու դանդաղում է: Հիմա էլ կնիք չունեն:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 11-ից 12-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 41 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՎԱԾ Է

Տավուշի մարզի Նոյեմբերյան խոշորացված համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղում ՌԴ զինուժի համար արդեն կառուցված է զորակայան, որի կողքին ռուսական եռագույն դրոշի գույներով ներկված վագոն-տնակ է տեղակայված: Թեեւ այդ զորանոցը կառուցված է, սակայն այդտեղ դեռ աշխատանքներ կան կատարելու: Հավաքովի կոնստուկցիաներով զորակայանի գլխին կամ կողքին ծածանվող Ռուսաստանի պետական դրոշ չկա, զորակայանի կողքին տեղակայված են խոշոր բեռնատար, ամբարձիչ տրակտոր եւ մարդատար մի քանի ավտոմեքենաներ: Ոսկեպարի բնակիչները հայտնեցին, որ զորակայանը Ոսկեպար գյուղից էլեկտրաէներգիա չի ստանում. այն հավանաբար սնուցվում է դիզելային շարժիչով աշխատող էլեկտրակայանից: Նման հավաքովի զորակայան կառուցվում է նաեւ Տավուշի մարզի Բերդ խոշորացավծ համայնքի սահմանամերձ Այգեպար գյուղում՝ խորհրդային ժամանակ գործած փոքր օդանավակայանի տարածքում:

Այգեպար բնակավայրի վարչական ղեկավար Արկադի Յամուկյանը հայտնեց, որ զորակայանի շենքն արդեն կառուցված է, սակայն ինքը չի կարող ասել, թե դեռ ինչ աշխատանքներ կան կատարելու, քանի որ ինքը չի առնչվում այդ շինարարությանը: Աշխատանքները կատարում է Գորիս քաղաքից շինարարական ինչ-որ կազմակերպություն, որպես բանվորներ կառուցապատմանը մասնակցում են Բերդ խոշորացված համայնքի տարբեր բնակավայրերի բնակիչներ: Նման զորակայան կառուցվում էր նաեւ Իջեւան խոշորացված համայնքի Աչաջուր գյուղում՝ գյուղ մտնող հիմնական ճանապարհից ձախ գտնվող տարածքում: Աչաջուր բնակավայրի վարչական ղեկավար Կարեն Ղալթախչյանը հայտնեց, որ տեւական ժամանակ է, ինչ այդ զորակայանի կառուցման աշխատանքները դադարեցված են:

Մինչ այժմ Աչաջրի տարածքում զորակայանի կառուցման քիչ աշխատանքներ են կատարել, որոնց մասնակցել են Իջեւան համայնքի Բերքաբեր, Լուսաձոր գյուղերից, այլ բնակավայրերից բանվորներ: Աչաջրի վարչական ղեկավարը չգիտի, թե որն է շինարարության դադարեցման պատճառը, աշխատանքները կշարունակվեն, թե ոչ: Աչաջրում եւս զորակայանի շինարարությունը կատարել է Գորիսից շինարարական կազմակերպությունը: Ռուսաստանի զինուժի ներկայացուցիչները չեն հայտնում, թե որն է լինելու Տավուշի մարզում տեղակայվող ռուսական զինուժի առաքելությունը: Պաշտոնապես հայտարարվել է, որ ռուսական զինուժը Տավուշի մարզում է գտնվում հայ-ռուս ռազմական համագործակցության պայմանագրի շրջանակներում: Ենթադրվում է, որ ռուսական զինուժի ներկայացուցիչների միջոցով է առաջիկայում իրականացվելու Տավուշում հայ-ադրբեջանական սահմանի սահմանազատումը եւ սահմանագծումը: Ռուսական զինուժը Տավուշի մարզում տեղակայվեց 2021 թվականի օգոստոսի սկզբից:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՎԻԱՏՈՄՍԵՐ

ԽՆԴԻՐՆԵՐ՝ ՏՈՒՐԻԶՄԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Սեպտեմբերի 13-ից հետո, երբ Ադրբեջանը ռազմական նոր ագրեսիա իրականացրեց Հայաստանի դեմ, տուրիզմի ոլորտում մի շարք խնդիրներ են ի հայտ եկել: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց Մեխակ Ապրեսյանը: Բացի այս, իր հերթին ոլորտի վրա ազդեցություն ունեցան նաեւ Մոսկվա-Հայաստան ավիատոմսի գները, որոնք շեշտակի բարձրացան ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի՝ մոբիլիզացիա հայտարարելուց հետո:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը շտապեց թվեր հրապարակել՝ նշելով, որ սեպտեմբեր ամսին Հայաստան այցելել է 198 հազար 74 զբոսաշրջիկ, իսկ առաջին 9 ամիսներին այս թիվը կազմել է 1 մլն 240 հազար: Շատերը կասկածի տակ դրեցին Քերոբյանի հրապարակած թվերը՝ նկատելով, որ մոբիլիզացիայից հետո Հայաստան այցելածները ոչ թե զբոսաշրջիկ են, այլ պատերազմի չմեկնելու համար են եկել:

Տուրիզմի հայկական ֆեդերացիայի (ՏՀՖ) նախագահ Մեխակ Ապրեսյանի խոսքով՝ նրանք օգտակար զբոսաշրջիկ չեն մեզ համար, որովհետեւ մարզեր չեն գնում, տարբեր վայրեր, այդ գումարները չի բաշխվում ամբողջ ինդուստրիայով մեկ:

«Այս մարդկանց նպատակը ոչ թե պլանավորված հանգիստն է, այլ մոբիլիզացիայով պայմանավորված են եկել, եւ նրանց շրջագայելու հավանականությունը այդքան մոտ չէ: Բայց սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսները համարվում են ակտիվ սեզոն զբոսաշրջության համար, եւ եթե վերջին իրադարձությունները չլինեին, ապա մենք կարող էինք ավելի շատ զբոսաշրջիկ ունենալ: Տոմսերի գները զգալի բարձրացան: Այդ գներով զբոսաշրջիկը չէր գալու, 5000 կամ 1000 դոլար չէին տա տոմս գնեին ու գային: Նրանք սովորական գներով տոմսերը գնելու էին եւ ավելի շատ էին ծախսելու, շատ էին շրջագայելու, եւ նրանցից օգուտն ավելի մեծ էր լինելու»,- նկատեց Մեխակ Ապրեսյանը: Մասնագետի խոսքով՝ մեր երկրում կազմակերպված տուրիզմը դեռ կայուն չէ, քանի որ Եվրոպայից, Ամերիկայից, Ճապոնիայից, Չինաստանից չունենք այդքան այցելություններ:

Նշենք, որ մոտ 20-օր չաշխատելուց հետո Ջերմուկի հյուրանոցներն են բացվել: Ճիշտ է, արդեն մի քանի օր է, ինչ հյուրանոցները բաց են, բայց ամրագրումները քիչ են: Հյուրանոցներից ArmLur.am-ին փոխանցեցին, որ օտարերկրացի հյուրեր ունեն, բայց նրանց թիվը փոքր է:

Տուրիզմի հայկական ֆեդերացիայի (ՏՀՖ) նախագահ Մեխակ Ապրեսյանի կարծիքով՝ գործադիրը պետք է միջոցներ ձեռնարկի շատ արագ վերականգնելու այցելությունները: «Պետք է միջոցներ ձեռնարկել նորից միջազգային շուկային համոզելու, որ Ջերմուկում անվտանգ է, գրավիչ է, գեղեցիկ է, հաճելի է: Պետք է աշխատանքներ տանել դիվանագիտական ուղիներով, որպեսզի այն երկրները, որոնք իրենց քաղաքացիներին հորդորել էին չգնալ Վայոց ձորի, Գեղարքունիքի, Սյունիքի մարզեր, իրենց հայտարարությունները փոխեն»,- նկատեց մեր զրուցակիցը:

Բացի այս, մեզ հայտնի դարձավ, որ հյուրանոցային ծառայությունների սակագները բարձրացել են: Մասնագետի խոսքերով՝ այս իրավիճակով, համաշխարհային զարգացումներով, ռուս-ուկրաինական ճգնաժամով պայմանավորված՝ գնաճ կա. «Գումարած սրան դոլարի ու եվրոյի արժեզրկումը դրամի նկատմամբ: Դա նշանակում է, որ ծառայությունների գները 30 տոկոսով աճել են»:

ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԼՈՒՐՋ ԽՆԴԻՐՆԵՐ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում այս պահին շուրջ 236000 նախադպրոցական տարիքի երեխաներ (որոնցից 62.000-ը՝ գյուղական համայնքներում) ընդգրկված չեն նախադպրոցական ծառայության մեջ: Այս մասին ասուլիսում հայտնեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը:

Նրա խոսքով՝ վերջին 2 տարիները, պայմանավորված համավարակով, բավականին բարդ էին նախադպրոցական կրթության համար: Եթե դպրոցներում հնարավոր էր անցնել հեռավար կրթության, ապա նախադպրոցական կրթության համակարգի համար եղան լուրջ խնդիրներ երեխաների ընդգրկվածության մասով:

«2020-21 թվականներին որոշակի սահմանափակումներով էինք երեխաներին ընդգրկում համակարգ, ուստի վերջին 2 տարիների տվյալները չեն արտացոլում համակարգի իրական հզորությունը»,- ասաց նա:

ԿԳՄՍՆ փոխնախարարի խոսքով՝ 2019 թվականի ավարտին նախադպրոցական կրթության ոլորտում կար 0-5 տարեկան երեխաների 34,7 տոկոս ընդգրկվածություն, ընդ որում՝ 3-5 տարեկան երեխաների ընդգրկվածությունը կազմել է 64.4 տոկոս:

«2020 թվականին շուրջ 6 տոկոսով աճել է 3-5 տարեկան երեխաների ընդգրկվածության հնարավորությունը՝ շնորհիվ նոր բացված նախակրթարանների եւ նոր հաստատությունների: 2020 թվականին շուրջ 22 հաստատություն է բացվել, որոնք սկսել են գործել նախադպրոցական կրթություն տրամադրելու համար»,- ասաց Անդրեսյանը, բայց շեշտեց, որ խնդիրը դեռ առկա է:

Երեւանի 40 մանկապարտեզներում հրդեհատեխնիկական հետազոտություններ են կատարվել

Նա հիշեցրեց, որ կառավարության ծրագիրը հստակ սահմանում է, որ պետք է մինչեւ 2026 թվականը 3-5 տարեկան երեխաների ընդգրկվածությունը 85 տոկոսի հասցնել, իսկ կրթության զարգացման պետական ծրագիրը մինչեւ 2030 թվականը հստակ սահմանում է, որ պետք է երեխաների ընդգրկվածությունը հասցնել 95 տոկոսի:

Նախատեսվում է 500 մանկապարտեզներ վերակառուցել կամ կառուցել: Այս պահին 92 մանկապարտեզներում աշխատանքներ են ընթանում:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ՃՏՊ. 15 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ (1)

«ՄԱԳՆԱԿ ՍՈՒԼԱՐ» ՍՊ ընկերությունը մտադիր է դիմել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ ընկերության՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքում կառուցված «Արեւ-1» արեւային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտով:

Առաջարկվող սակագինը՝ 25.052 դրամ/կՎտժ (առանց ԱԱՀ):

Հեռ.՝ (+374) 77 17 19 72:

Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Ադոնցի փ., 8 շ., 170 տարածք, Երեւան, Կարապետ Ուլնեցու 31/2:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ (2)

«ՄԱԳՆԱԿ ՍՈՒԼԱՐ» ՍՊ ընկերությունը մտադիր է դիմել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ ընկերության՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքում կառուցված «Արեւ-2» արեւային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտով:

Առաջարկվող սակագինը՝ 25.052 դրամ/կՎտժ (առանց ԱԱՀ):

Հեռ.՝ (+374) 77 17 19 72:

Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Ադոնցի փ., 8 շ., 170 տարածք, Երեւան, Կարապետ Ուլնեցու 31/2:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ (3)

«ՋԻԷՄԴԻ ԵՎ ՋԻԻԴԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊ ընկերությունը մտադիր է դիմել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ ընկերության՝ ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն համայնքում կառուցված «Ջիէմդի եւ Ջիիդի էներջի» արեւային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտով:

Առաջարկվող սակագինը՝ 25.052 դրամ/կՎտժ (առանց ԱԱՀ):

Հեռ.՝ (+374) 77 17 19 72:

Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան Ադոնցի փ., 8 շ., 170 տարածք, Երեւան, Կարապետ Ուլնեցու 31/2:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ (1)

«ԱՐՏՍՈԼԱՐ» ՍՊ ընկերությունը մտադիր է դիմել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ ընկերության՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքում կառուցված «Արտսոլար» արեւային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտով:

Առաջարկվող սակագինը՝ 25.052 դրամ/կՎտժ (առանց ԱԱՀ):

Հեռ.՝ (+374) 77 17 19 72:

Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան Ադոնցի փ., 8 շ., 170 տարածք, Երեւան, Կարապետ Ուլնեցու 31/2:

ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ ԵՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Պատմության եւ մշակույթի հուշարձանների վերականգնման 2022թ. պետական բյուջեով նախատեսված աշխատանքների շրջանակում տարվա սկզբից նախատեսված էր իրականացնել մի շարք հուշարձանների վերականգնման աշխատանքներ:



ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի նորոգման եւ ամրակայման, Գոշ համայնքի Գոշավանքի Սբ. Աստվածածին եկեղեցու տանիքածածկերի նորոգման, ՀՀ Լոռու մարզի Քոբայր կայարանի Քոբայրավանքի սեղանատան վերականգնման եւ Ալավերդի համայնքի Սանահին վանական համալիրի Սբ. Ամենափրկիչ եկեղեցու նորոգման եւ ամրակայման աշխատանքներն այժմ ընթացքի մեջ են:

Հուշարձանների վերականգնման ծրագրում, որպես հրատապ անհրաժեշտություն, տարվա ընթացքում ավելացել են ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Ճանապարհաշինարարներ» (Անվերջության ժապավեն) հուշարձանի տարածքի լուսավորության ցանցի անցկացման եւ ՀՀ Լոռու մարզի Լոռի բերդ ամրոցի պարսպի հյուսիսարեւելյան հատվածի ամրակայման եւ մասնակի վերականգնման աշխատանքները:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության ներկայացուցիչները պարբերաբար այցեր են կատարել վերականգնվող հուշարձաններ տեղում աշխատանքային խնդիրների քննարկման եւ ավարտվածության աստիճանի վերահսկման նպատակով:

Դիլիջանի Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստի թանգարան

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստի թանգարանի մասնաճյուղի (կառուցված 19-րդ դարի վերջում) վթարային վիճակը հաշվի առնելով՝ ԿԳՄՍ նախարարությունը նախաձեռնել է շենքի վերականգնումը: Աշխատանքների ավարտը նախատեսվում է 2024 թվականին: Այս տարի նախատեսված է իրականացնել հողային, հիմքերի ուժեղացման եւ նոր պատերի կառուցման աշխատանքներ, որոնք մոտենում են ավարտին:

Քոբայրավանքի սեղանատուն

10-13-րդ դդ. հիմնադրված ՀՀ Լոռու մարզի Քոբայր ե/գ կայարանի Քոբայրավանքի հատվածում սեղանատան վերականգնման աշխատանքներն ընթանում են ծրագրին համաձայն: Չնայած բարձրադիր եւ դժվարամատչելի դիրքին՝ աշխատանքներն ընթանում են ըստ ժամանակացույցի եւ կավարտեն 2023 թվականին:

Սանահին վանական համալիրի Սբ. Ամենափրկիչ եկեղեցի եւ Լոռի բերդ ամրոցի պարիսպ

ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահին վանական համալիրի Սբ. Ամենափրկիչ եկեղեցու նորոգման աշխատանքների իրականացման ընթացքում ծածկասալերի քանդման աշխատանքներից հետո առաջացել է լրացուցիչ աշխատանքների իրականացման անհրաժեշտություն:

Լոռի բերդ ամրոցի պարսպի հյուսիսարեւելյան հատվածի ամրակայման եւ մասնակի վերականգնման աշխատանքները մեկնարկել են ամռանը:

Վերոնշյալ բոլոր աշխատանքներն ընթանում են բնականոն հունով՝ համաձայն ժամանակացույցի, եւ ներկա պահին կատարված է աշխատանքների ամբողջ ծավալի մոտ 70 տոկոսը:

Ավարտված աշխատանքներ

ՀՀ Տավուշի մարզի Գոշ համայնքի Գոշավանքի Սբ. Աստվածածին եկեղեցու տանիքածածկերի նորոգման եւ ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Ճանապարհաշինարարներ» (Անվերջության ժապավեն) հուշարձանի տարածքի լուսավորության ցանցի իրականացման աշխատանքներն ամբողջովին ավարտված են:

Վերականգնման եւ նորոգման աշխատանքների ընթացքում առաջացած խնդիրների լուծումն իրականացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության, որակի տեխնիկական եւ հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ միասին:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում շարունակելու է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը՝ նշված մեկնարկային գնով.

- Արմավիրի մարզ, համայնք Ակնալիճ, Խնուսի փողոց, 8 հասցեում գտնվող 1844.7 ք.մ. անասնաշենք, 121.7 ք.մ. անասնաշենք, 421.3 ք.մ. անասնաշենք, 24.1 ք.մ. պահեստ, 32.7 ք.մ. պահեստ, 293.6 ք.մ. ծածկ, 293.6 ք.մ. ծածկ, 18.9 ք.մ. / 37.8 խ.մ. / պարիսպ եւ 1.034 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 35000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 17.10.2022թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2022թ: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բիէսթի» ՍՊԸ-ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը: Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ԴՈՒԴՈՒԿԱՀԱՐ

ՋԻՎԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ ԿԴԱՌՆԱՐ 94 ՏԱՐԵԿԱՆ

Երեկ աշխարհահռչակ դուդուկահար Ջիվան Գասպարյանի ծննդյան օրն էր. երաժիշտը կդառնար 94 տարեկան:

Ջիվան Գասպարյանը, որը ծնվել է Կոտայքի մարզի Սոլակ գյուղում, մորը կորցրել է վաղ տարիքում, եւ քանի որ հայրը մասնակցել է Երկրորդ աշխարհամարտին, երաժշտի մանկությունն անցել է որբանոցում:

Դուդուկի հանդեպ սերը մանկուց է սկսվել, եւ դեռեւս վեց տարեկանում, առանց կրթություն ստանալու, Ջիվան Գասպարյանը սկսել է նվագել: 1947 թվականին երիտասարդ երաժիշտը սիրողական խմբի հետ մեկնել է Մոսկվա ելույթի, որտեղ ելույթի ավարտին Ստալինից նվեր է ստացել «Պոբեդա» ժամացույց: Երկու տարի անց Ջիվան Գասպարյանը միացել է Թաթուլ Ալթունյանի անվան Հայկական ժողովրդական երգի-պարի պետական անսամբլի Ազգային երգ ու պարի համույթին եւ, որպես մենակատար, իր առաջին մասնագիտական ելույթն ունեցել Երեւանյան երաժշտասիրական նվագախմբի հետ, քանի դեռ նոտաները կարդալ չգիտեր:

Դուդուկահարը 1956 թվականին ստացել է իր առաջին մրցանակը, իսկ 1959-ին՝ UNESCO-ի չորրորդ միջազգային փառատոնին արժանացել ոսկե մեդալի: 1973 թվականին արժանացել է ՀՀ Ազգային արվեստագետի պատվավոր կոչմանը:

Երաժշտի միջազգային գործունեությունը սկսվել է 1988 թվականին, երբ Մոսկվայում Բրայան Ինոն լսել է դուդուկահարի նվագն ու հրավիրել Լոնդոն: Ջիվան Գասպարյանի նվագն օգտագործվել է Մարտին Սկորսեզի «Քրիստոսի վերջին գայթակղությունը» ֆիլմում, համագործակցել է Կրոնոս կվարտետի եւ Լոս Անջելեսի երաժշտական օրկեստրայի հետ: Դուդուկահարը մասնակցել է նաեւ այնպիսի ֆիլմերի երաժշտությունների ստեղծմանը, ինչպիսին են «Ռոնին» (1998), «Օնեգին» (1999), «Գլադիատոր» (2000), «Սիրանա» (2005), «Արյունոտ ադամանդ» (2006), «Ձյուն եւ մոխիր» (2015) եւ այլն:

Երաժիշտը թողարկել է 20-ից ավել ձայնասկավառակ, ավելի քան 1000 ձայնագրություն եւ մասնակցել է շուրջ 20 հազար համերգների:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Գ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

«Ավազան 1» արեւային կայան, «ԷՆԵՐԳԵՅԹ ԴԻԶԱՅՆ ԷՆԴ ՔՆՍՏՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն
(հայտատուի անվանումը)
ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Վարդենիս, Ավազան բնակավայրի 7-րդ փողոցի թիվ
_____9 հողամաս _____
(աշխարհագրական տարածքը (բնակավայրը, մարզը, քաղաքը))
մտադիր է դիմել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝
_____էլեկտրական էներգիայի արտադրության_____
(էլեկտրական էներգիայի, ջերմային էներգիայի, բնական գազի)
_____սակագնի_____
(լիցենզավորված գործունեության իրականացման տեսակը)
սահմանման (վերանայման) հայտով:
Առաջարկվող սակագինը (դրույքը)՝ 25.052 դ/կՎտժ առանց ԱԱՀ
ՀՀ Երեւան, Կենտրոն, Թումանյան 1 անցղ /շ. 4 /բն. 6 / 093400770/, tigran_vardazaryan@yahoo.com
(հայտատուի գտնվելու վայրը, հեռախոսը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն)

My Team ՀԱՎԵԼՎԱԾ Գ

Team Telecom Armenia-ի My Team հավելվածը App Store-ի եւ Play Store-ի անվճար հավելվածների շարքում ներբեռնումների թվով առաջինն է Հայաստանում. վերջին մեկ շաբաթում օրական ներբեռնումների քանակն ավելացել է 3-ից 4 անգամ:

My Team հավելվածի միջոցով Team-ի բաժանորդները մեկ հպումով կարողանում են ստուգել հաշվեկշռի եւ փաթեթների մնացորդները, փոփոխել սակագնային փաթեթները, ակտիվացնել ավտոմատ վճարումներ, ինչպես նաեւ ծանոթանալ Team-ի ամենավերջին նորություններին ու ակցիաներին եւ կատարել առցանց գնումներ eShop օնլայն խանութից, առանց տնից դուրս գալու:

Հիշեցնենք, որ օրեր առաջ Team Telecom Armenia-ն հայտարարել էր My Team հավելվածի միջոցով անցկացվող «Շեյք» խաղարկության նոր պայմանների մասին, ըստ որի՝ այս տարի բոլորը, անկախ կապի օպերատորից, կարող են «շեյքել»: Այս ընթացքում խաղարկության մասնակիցները ստացել են 231000 գիգաբայթ ինտերնետ, օնլայն կինոթատրոնից ու այլ հավելվածներից օգտվելու 20000 պրոմոկոդեր եւ ավելի քան 200 ֆիզիկական նվերներ:

«Շեյքի» մասնակիցներն ունեն Iphone 13 Pro ու Samsung Galaxy A13 սմարթֆոններ, էլեկտրական ինքնագնացներ, ականջակալներ եւ Volkswagen ID.4 էլեկտրական մեքենա շահելու հնարավորություն:

Խաղարկությունը տեւելու է մինչեւ դեկտեմբերի 31-ը: Մասնակցելու համար պետք է ներբեռնել My Team հավելվածը, այնուհետեւ օրը մեկ անգամ թափահարել՝ «շեյքել» հեռախոսը մինչեւ 5 վայրկյան:

Team Telecom Armenia-ն ՀՀ տարածքում տրամադրում է ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: 2021 թվականից ընկերությունը սկսել է տարածաշրջանում եզակի՝25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) ցանցի կառուցումը: Առաջիկայում այս ցանցին կմիացվեն Հայաստանի ողջ տարածքում գործող բջջային կայանները, ինչի շնորհիվ զգալիորեն կբարելավվի նաեւ շարժական կապի որակը:

ԼՈՒՐԵՐ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿԻՆՈՊՐԵՄԻԵՐԱ

«ԱՐՓԱ» միջազգային կինոփառատոնի շրջանակում կկայանա «Անտեսանելի հանրապետություն» ֆիլմի ամերիկյան կինոպրեմիերան: Ֆիլմը հիմնված է արցախցի լրագրող Լիկա Զաքարյանի պատերազմական օրագրերի վրա՝ ներկայացնելով խիստ անձնական եւ քաղաքական դրամատիկ պատմություն 44-օրյա պատերազմի մասին:

Ֆիլմի ռեժիսորը Կարին Հովհաննիսյանն է, պրոդյուսերները՝ Էրիկ Էսրայելյանը, Սերժ Թանկյանը, Ալեք Մուհիբյանը եւ Կարին Հովհաննիսյանը:

Ֆիլմը ցուցադրվել է ամերիկյան հայտնի AMC կինոթատրոնների ցանցի՝ Գլենդելում գտնվող սրահում նոյեմբերի 3-ին:

ՀԵՌԱՆԱԼՈՒ Է ԱԿՈՒՄԲԻՑ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի 36-ամյա իսպանացի պաշտպան Սերխիո Ռամոսն արձագանքել է խոսակցություններին, թե աշխարհի չեմպիոն Ֆրանսիայի հավաքականի հարձակվող Կիլիան Մբապեն ցանկանում է հեռանալ փարիզյան ակումբից, քանի որ ղեկավարության հետ լուրջ տարաձայնություններ ունի:

«Ես չեմ հավատում խոսակցություններին, կենտրոնացած ենք մեր աշխատանքի վրա: Մենք թերթ չենք կարդում:

Միայն կարող եմ ասել, որ ընկերություն եմ անում Կիլիանի հետ, եւ նա շատ երջանիկ է Փարիզում»,- ասել է Սերխիո Ռամոսը:

Ֆրանսիական Le Parisien-ը գրել էր, որ Մբապեն դժգոհ է փարիզյան ակումբի ղեկավարությունից եւ ցանկանում է հունվարին փոխել ակումբը:

Այս տարի պայմանագրի երկարաձգման բանակցություններում Մբապեն ու ՊՍԺ-ի ղեկավարները պայմանավորվածության են հասել Նեյմարի տրանսֆերը վաճառելու եւ լեհ հարձակվող Ռոբերտ Լեւանդովսկուն ձեռք բերելու մասին, ինչը չի հաջողվել անել: Մբապեի պայմանագիրը ՊՍԺ-ի հետ նախատեսված է մինչեւ 2025թ. հունիս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՄՊԻՈՆՆԵՐԸ

Երեւանի «Օրանժ ֆիթնես» մարզադահլիճում անցկացվել է բադմինտոնի Հայաստանի առաջնությանը: Մասնակցել են Երեւանի, Գյումրիի, Վանաձորի, Իջեւանի եւ Սպիտակի 60 ներկայացուցիչներ. հաղորդում է ՀԱՕԿ-ի լրատվականը:

Մենախաղում չեմպիոնի կոչումը նվաճել են Զավեն Մնացականյանը եւ Սվետլանա Բոյաջյանը:

Զուգախաղում հաղթող են դարձել Զավեն Մնացականյան - Արման Վարդանյան եւ Լիլիթ Պողոսյան - Էլեն Տիրատուրյան զույգերը:

Լիլիթ Պողոսյանը եւ Զավեն Մնացականյանը հաղթել են նաեւ խառը զուգախաղում:

● *Հոկտեմբերի 13-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Ի զեն» թատերական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են պահանջվում ամուսնության բացակայման մասին տեղեկանք ստանալու համար:

Հասմիկ Փիրումյան (32 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկանք ստանալու համար անձամբ դիմում ներկայացնելու դեպքում նախարարություն են ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթ: Այն դեպքում, երբ անձը նախկինում գտնվել է գրանցված ամուսնության մեջ, նաեւ տվյալ ամուսնության փաստը դադարելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ, պետական տուրքի վճարման անդորրագիր:

Լիազորված անձի միջոցով դիմելու դեպքում՝

1) անձը հաստատող փաստաթուղթ,

2) հայցողի անձը հաստատող փաստաթղթի պատճենը, հայցողի կողմից տրված պարզ լիազորագիր,

4) պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիր,

5) այն դեպքում երբ տեղեկանք հայցող անձը նախկինում գտնվել է գրանցված ամուսնության մեջ, նաեւ տվյալ ամուսնության փաստը դադարելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնության բացակայման մասին տեղեկանքը տրամադրվում է նույն աշխատանքային օրը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է մահվան պետական գրանցման հիմքը:

Տիգրան Դանիելյան (54 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Անձի մահը ենթակա է գրանցման առանց ժամկետային սահմանափակման:

Մահվան պետական գրանցման հիմքերն են՝

1) բժշկական կազմակերպության կամ բժշկի տված՝ մահը հաստատող սահմանված ձեւի փաստաթուղթը,

2) անձի մահվան փաստի հաստատման կամ անձին մահացած ճանաչելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը,

3) «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտը:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մահվան պետական վկայականը թղթային կրիչի վրա տրամադրում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման սպասարկման կենտրոնները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Լոռու մարզում

Արդեն մի քանի ամիս է՝ Լոռու մարզի Արջուտ գյուղի բնակիչներից արդարացիորեն բարձրաձայնում են, որ մի քանի տարի է՝ փորձել են Լոռու մարզպետարանից, Շրջակա միջավայրի նախարարությունից ստանալ հստակ պատասխան, թե, ի վերջո, ինչն է պատճառը, որ Լոռու մարզպետարանն ու Շրջակա միջավայրի նախարարությունը լուծում չեն տալիս այն խնդրին, որը վերաբերում է աղբահանությանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________

Ազգանուն՝ ______________

Առաքման հասցե՝ ______________

Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ______________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.10.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: